Լալայեանցների պալատանման տանը, որի առիթով շահը պարգևել է նրան Զիրի Խուրշիտի 3րդ աստիճանը։

1883 թ. թագաւոր Կայսեր Ալէքսանդր III-ի թագադրութեան ժամանակ պատգամաւոր է գնացած Բագուայ նահանգի ազնուականաց կողմից, որի առիթով ստացել է Անայի 3րդ աստիճանը հանդերձ բրոնզեայ մեդալով։

1888 թ. Ալէքսանդր ազան իւր գործունէութեան և ծառայութեան մասին ստացել է Ստանիսլաւի 2րդ աստիճանը[1]։

Սկսած հին ժամանակներից մինչև այսօր մի որ և իցէ ազգային և եկեղեցական օժանդակութեան պէտք եղած ժամանակին՝ Լալայեանք առաջին տեղն են բռնել իրանց առատ նուիրատուութեամբ։

1880 թ. հացի թանգութիւն էր Շամախի քաղաքում. Բագու վերաբնակ եղբարք Գէորգ և Կարապետ ազանները Ռուսաստանից ալիւր բերել տուին և ուղարկեցին Շամախի տեղական աղքատներին (առանց խտրութեան դասնման) բաժանելու համար։ Շամախում զանազան ժամանակում պատահած երկրաշարժը ի թիւս այլոց և զոցա մեծ նիւթական վնասներ է պատճառել։

Բագու քաղաքում ունին պալատանման հոյակապ տներ, քարվանսարաներ, բազմաթիւ խանութներ. Բագուից դուրս՝ ունին՝ աղարակներ, նաւթահանք և նաւթահորեր։ Տփխիս ունին հոյակապ տուն և հոյակապ քարվանսարայ։

Պարոն Գօլուբակինի նահանգապետութեան ժամանակ, Բագուն դեռ նոր նահանգական քաղաք լինելով, Բագուի հասարակութիւնը կլուբի նեղութիւն է ունեցել։ Պարոն նահանգապետի միջնորդութեամբ հանդուցեալ Գէորգ ազան իւր եղբօր՝ այժմ կենդանի՝ Կարապետ ազայի հետ միասին կառուցանում են մեծ ծախքով մի հոյակապ երկյարկանի շինութիւն, որի վերին յարկը՝ որ 8000 ռուբլու չափ արդիւնք է բերում, 10 տա-

---

[1])Այն 1896 թուի մայիսին Ալէքսանդր ազան ընտրութեամբ Բագուայ նահանգի ժողովրդոց գնաց Մոսկուա ներկայ լինելու 14 մայիսի կայսեր օծմանը և թագադրութեանն իբրև պատգամաւոր։